# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (0235) 22383; (010)250519 artashatmeria@artashat.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 5048-Ա**

## «ԱՄԱՀ-ԷԱՃԱՁԲ-26/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետով, «ԱՄԱՀ-ԷԱՃԱՁԲ-26/01» ծածկագրով հրավերի /այսուհետ՝ Հրավեր/ առաջին մասի 8.15 կետով, հիմք ընդունելով «ԱՄԱՀ-ԷԱՃԱՁԲ-26/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետև՝ Հանձնաժողով/ 2025թ դեկտեմբերի 12-ի թիվ 4-րդ արձանագրության թիվ 1 և 30 որոշումները, ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը **որոշում եմ**.

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանները չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԱՄԱՀ-ԷԱՃԱՁԲ-26/01 | 1 | հաց | 10572000 | Հացամթերք ՍՊԸ | 4659870112 | Российская Федерация | 12.12.2025 թ. | Արտաշատի համայնքապետարան | Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մասի 6-րդ կետի ա) ենթակետ՝ Խախտել նման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:<br><br>Գնահատող հանձնաժողովի 2025թ դեկտեմբերի 10-ի 3-րդ արձանագրությամբ արձանագրվել է՝ Հացամթերք ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտում անհամապատասխանություններ իրավերի պահանջների նկատմամբ: ՀՀ կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն կասեցվել է գնահատող հանձնաժողովի նիստը և մասնկցին Հացամթերք ՍՊԸ<br><br>-ին առաջարկվել է | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:<br><br>Մասնակցին՝ Հացամթերք ՍՊԸ -ին համակարգի միջոցով պատշաճ ծանուցվել է անհամապատասխանությունների մասին: Մասնկիցը՝ Հացամթերք ՍՊԸ -ն<br><br>չի շտկել անհամապատասխանությունները՝ որը հանգեցրել է ՝գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: | |

2.Ապահովել սույն որոշման տրամադրումը ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին որոշման կայացման հաջորդ օրը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 26
ք.Արտաշատ